

24349

505pp. 6

6pp. 6

891.99-122

5-65

Gene-Group

1914

20 03

891.92-192

5-65

413

# ԷՕՄԻՒՐԵԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՏՈՐ Ա.

ՊԱՏՐԱՍԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ  
ՄԻՍԱԿ Փ. ԷՕՄԻՒՐԵԱՆ



ՏՊԱՐԱՆ ԿՈՉՆԱԿԻ ՆԻ ԵՈՐՔ

1914

38718-44

235

ԳԻՆ՝ I ՏՈՒԱՐ

Address — REV. S. K. EMURIAN,  
FORT EDWARD, N. Y.  
U. S. A.



22082.60

Copyrighted 1914 by S. K. EMURIAN

ԻՄ ՀՕՐՍ

ՎԵՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԽՕՄԻՒՐԵԱՆԻ

ԿԸ ՁՕՆԵՄ

Երգարանիս այս առաջին հասորը՝ որդիական անբացատրելի սիրով  
ու յարգանքի արտաբուդիս զգացումով — ՀՕՐՍ որ,  
ստոււեցուց, կրթեց ու ներշնչեց  
երգել, նուագել ու ձայնագրել:

ԵՒ

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՄ ՍԻՐԵԼԻ ՄՕՐՍ

ԲԱՄԲԱՇԵ ԱՆՆԱ Գ. ԽՕՄԻՒՐԵԱՆԻ

որ պահպանեց, խնամեց եւ սիրեց զիս  
արսով, կեանքով եւ աղօթքով՝  
մինչեւ իր վերջին շունչը:

22082.60

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երկար ատենէ ի վեր մեր մէջ — Հայերուս մէջ — զգացուած էր ժամանակին ու պարագային յարմարող երգերու պակասը: Այս պակասը լեցնելու փափաքով պատրաստեցի երգարանիս առաջին հատորը:

Մենք պէտք չունինք ուրիշ ազգերու երգերը թարգմանելու: Ունինք մեր մէջ բանաստեղծներ որ, գրած են եւ կարող են գրել ամեն պարագայի յարմար երգեր՝ մեր ազգին հոգիովը տողորուած: Ունինք նաեւ երգահաններ որ կարող են մեր բանաստեղծներուն երգերը կենդանի պահել ժողովրդին սրտին մէջ՝ ձայնագրելով անոնց համար յատուկ եղանակներ, և այսպէս կարեւոր ծառայութիւն մատուցանել մեր ազգին: Չեմ գիտեր ինչո՞ւ մինչեւ հիմա մեր բանաստեղծները եւ երգահանները միասին այս մեծ պակասը չեն լեցուցած:

Եթէ այս ձեռնարկովս միջոց մը ըլլամ զանոնք ի գործ մղել՝ իրենց պարտականութիւնները ստանձնելու, ինքզինքս իրօք բարեբաղդ պիտի համարեմ:

Մենք Հայերս յաւէտ երկչոտ ու լալկան եղած ենք մեր պարագաներու բերմամբ, եւ ասիկայ ազգած է մեր երգերուն ու դէմքերուն: Մեր երգերը ողբերգութիւններ են յաւէտ ու մեր դէմքերը խոժոռ եւ տխուր են արտայայտութեամբ: Պայծառ ու զուարթ դէմքերու և արժանապատուութիւն ներշնչող շեշտերու, խնդազին երգերու, սրտապնդող քայլերգներու կարօտ ենք՝ օրուան հացին պէս:

Անյարմար չէ հոս ըսել թէ, դիւրին թող չը կարծուի երգի յարմարող ոտանաւորներ հեղինակել. հիանալի շատ քերթուածներ եղանակին չեն յարմարիր: Երգեր պարզ ու սահուն ըլլալու են. նոյնպէս եղանակներ ոտա-

նաւորին ողին և իմաստը արտայայտելու չափ զօրութիւն ու հրապոյր ունենալու են: Եղանակը բանաստեղծին միտքն ու ներշնչումը կը վերակենդանացնէ եւ կ'ըլլայ անոր իսկատիպ թարգմանը:

Այս դադափարականին վեր նայելով իմ դոյզն աշխատութիւնս կը դնեմ ի սպաս երգեցողութեան:

Պարտիմ մասնաւոր շնորհակալութիւնս մատուցանել ամեն անոնց որ բարեհաճեցան կանխաւ եղած կոչին համեմատ քաջալերել այս գործը՝ իրենց երգերով ու եղանակներով, մանաւանդ՝ բարեկամիս եւ գործակցիս վեր. Հայկ Ն. Նարտըմեանի: Յուսամ թէ նոյն ջանքը պիտի ընեն երգարանիս երկրորդ հատորին համար դեռ շատեր ալ իրենց մասնակցութեամբ:

ՍԻՍԱԿ Գ. ԷՕՄԻՐԵԱՆ

# ՀԱՅՐ ՄԵՐ

Moderato

Ս. Ք. ԷՍԲԻՐԵԱՆԸ

Հայր մեր որ յեր - կինս, Սուրբ Ե - Ղի - ցի ա - նուն Բո,

Ե - կես - ցէ ար - քա - յու - թիւն Բո, Ե - Ղի - ցին կամք

Որպէս յեր - կինս Բո՛ Որպէս յեր - Եւ յերկ - ըի: Որպէս յեր -

Որպէս յեր - կինս

կինս Եւ յերկ - ըի: Զհայր մեր Հա - նա - սա -

գորդ տուր մեզ այսօր, Ձկաց մեր Հա-նա-պա - գորդ  
 Տո՛ւր մե՛զ այս - օր

Տուր մեզ այսօր թող մեզ ըզ - ըզ-պարտիս  
 Տո՛ւր

մեր, թող մեզ ըզ-պարտիս մեր,  
 պարտիս մեր, թող մեզ ըզ - պարտիս մեր, Որ -

պէս եւ մենք թո - դումք մե - րոց պարտապանաց, Որ -

Որ - պէս ե - մենք  
 պէս եւ մենք թո-ղումք մե-րոց պարտապանաց .

եւ մի տանիր, եւ մի տանիր ըզմեզ 'ի փորձու -  
 ը - մեզ է

թիւն: Այլ փըր - կեա ըզմեզ 'ի չա - րէ, այլ փըր -

կեա ըզմեզ 'ի չա - րէ, փըր - կեա ըզ - մեզ  
 rit

Ի չա - րէ: Զի Քո է ար-քա-յու-թիւն եւ

դօ - րու-թիւն, զի Քո է ար-քա - յու - թիւն եւ դօ -

րու-թիւն եւ փառք յաւիտեանս, ամէն, Զի Քո է ար-քա-յու -

թիւն եւ դօ-րու-թիւն եւ փառք յաւիտեանս, Ա - մէն:

ՎՍՏԱՀԵԼԻ

Վ. Եր. Հայկ Ե. Եսրսբեան

Ս. Գ. Էօմբեան

1. Պի - տի մար - դիք ինձ ա - պա - հով վըս - տա - հի՞ն,

Արդ - եօք ի - րենց բո - լոր յոյ - սերն կեն - սա - յին,

Պի - տի յանձ - նե՞ն ի - րենց դան - ձերն պատ-ուա - կան -

Տուն, կեանք, սէր, սիրտ սուրբ ըս - տաց-ուածք հիմ - նա - կան:

ՎՍՏԱՀԵԼԻՔ (Եր.)

Խմբերգ

*cres.*

2

Ո՛հ, կը ճանչնամ նուիրական իմ պարտքերս.  
Վստահելի ճամբէ կ'երթան իմ ոտքերս.  
Լքեալներուն հաւատարիմ ընկե՞ր եմ.  
Սփոփանքի գաւաթ մը ջուր տուեր եմ:

Խմբ. Վստահե՞լի-սրտով, կեանքով  
Վստահե՞լի-ամենուն քով:

Կը վստահի՞ Աստուածս ինծի որդւոյն պէս.  
Կը վստահի՞ ընկերս ինծի հոգւոյն պէս:

3

Հես իմ քոյրերս անկեալ, անգոր դեղերին  
Հոն, ա՛հ եղբայրս արծաթպաշտին խեղճ դերին  
Ի՞նչ եմ ըրած իմ այդ ճնշեալ հէք եղբոր.  
Ի՞նչ օգնութիւն, քե՛զ կեղեքեալ, քե՛զ բանւոր:

Խմբ. Վստահե՞լի-սրտով, կեանքով  
Վստահե՞լի-ամենուն քով:

Կը վստահի՞ Աստուածս ինծի որդւոյն պէս.  
Կը վստահի՞ ընկերս ինծի հոգւոյն պէս:

4

Զսպո՞ծ եմ քաջ, հպարտ անձիս վատ կիրքեր  
Ունի՞մ մաքուր մտածումներ—սուրբ մխտակ,  
Հետեւելու գըտա՞յ այն անձն դորաւոր.  
Կանգուն, անխախտ, վէմի նման դարաւոր:

Խմբ. Վստահե՞լի-սրտով կեանքով.  
Վստահե՞լի-ամենուն քով:

Կը վստահի՞ Աստուածս ինծի որդւոյն պէս.  
Կը վստահի ընկերս ինծի հոգւոյն պէս:

5

Վստա՛հուցիւն, նկարագրի պերճ պսակ.  
Տէ՛ր, թող դրուի գլխուս վրայ շարունակ:  
Տուր որ ըլլամ վստահելի սիւնն մեր տան.  
Ազգս ու ազգեր ուրախանան բիւր խնդան:

Խմբ. Թող վախճանիմ վստահ կեանքով,  
Վստահելի ամենուն քով:

Այո՛, Աստուած կը վստահի որդւոյն պէս.  
Այո, ընկերս կը վստահի հոգւոյն պէս:

ԱՌԱՌՈՏ ԼՈՒՍՈՅ

Ներսէս Շնորհալի

Յար. Ս. Գ. Էօսիւրեան

1. Ա - ռա - ւօտ լու - սոյ . . . . . , ա - ըե-գակն ար - դար ,

առ իս լոյս ծագ-եա . . . . . : Բըղ-խունն ի Հօ - ըէ . . . . . ,

բըղ-խեա ի Հոգ - ւոյս բան քեզ ի Հա - ճոյս . . . . . :

2  
**Գ** անձող ողորմութան  
 անձիդ ծածկելոյ  
 գրող զիս արա :  
**Դ** ուռն ողորմութան  
 աւանդիս բաց,  
 ասեցո վերնոցն :

3  
**Ե** րեակ միութիւն,  
 ղէրոց խնամող,  
 ւ ինձ ողորմեա :  
**Զ** արթիր, Տէր, յօգնել  
 արքո ըզբմեայս  
 ուարթնոց նրմանէ :

4  
**Է** դ Հայր անբակիզբն,  
 ակից Ռդի,  
 մի՛ս Սուրբ Հոգի :  
**Ը** նկալ զիս գրած,  
 նկալ ողորմած,  
 նկալ մարդասէր :

5  
**Թ** ազաւոր փառաց,  
 ողորբեանց ջրւող,  
 ող ինձ ըզյանցանս :  
**Ժ** ողովող բարեաց,  
 ողովեա եւ զիս  
 ողովս անդրանկաց

6  
**Ի** քն, Տէր, հայցեմ  
 մարդասիրէդ  
 նձ բըծբելութիւն :  
**Լ** Եր կեանք մեռելոյս,  
 ոյս խաւարելոյս,  
 ուժանող ցաւոյս :

7  
**Խ** րհրդոց զիտող,  
 աւարիս ճնորհեա  
 րհրդի լուսաւոր :  
**Ս** րնունդ Հօր ծոցոյ,  
 ւածկելոյս սուրբու  
 ազեա լոյս փառաց :

8  
**Կ** ենարար Փրկիչ,  
 եցո ըզմեռեայս,  
 անգնեա զզորեալս :

**Հ** ասեա հաւասով,  
 ասասեա յուսով,  
 իմնեցո սիրով :

9  
**Ղ** այնիւս աղաչեմ,  
 եւօփս պաղաշիմ,  
 իր բարեաց ճնորհեա :

**Ղ** ամբարամբ լուսոյ,  
 եկավար նարսար,  
 օղեալս ամբացո :

10  
**Ղ** առազայք փառաց,  
 անապարհ ինձ ցոյց  
 եպել ի յերկինս :

**Մ** իսածիւնդ Հօր,  
 ոյժ զիս յառազաս  
 անուր հարսանեացդ :

11  
**Յ** որձամ զաս փառօփ  
 անագին աւուրն,  
 իբեա զիս Քրիստոս :

**Ն** որոզող նմութեանց,  
 որոզեա եւ զիս,  
 որոզ զարդարեա :

12  
**Շ** նորհասու բարեաց  
 նորհեա զհաւուրիւն,  
 նորհեա զբողութիւն :

**Ո**ւրախացո, Տէր,  
 գլոյս փրկութեամբ,  
 յի վասն եմ ի սուգ :

13  
**Չ** ար մեակողին,  
 ար սերմանց նորին  
 արացո զպսուղն :

**Պ** արգելիչ բարեաց,  
 արգելեա իմոց  
 արեաց բողութիւն :

14  
**Ղ** ուր ճնորհեա աչացս,  
 երմ նեղուլ արժար,  
 Եզել ըզյանցանս :

**Ռ** Եսիւնդ Բաղցու,  
 ամ հոգւոյս արքո,  
 ան ցոյց ինձ լուսոյ :

15  
**Ս** Եր անուն Յիսուս,  
 իրով Բով նկիւս  
 իրս իմ Բարեղէն :

**Վ** ասրն զբողութեան,  
 ասն ողորմութեան  
 երբսին կեցո :

16  
**Տ** ենչարւող սեպեամբ  
 ուր ինձ յագեմալ,  
 Եր Յիսուս Քրիստոս :

**Ր** արունդ երկնաւոր,  
 ոսեա զաւակեւս  
 ամից երկնայնոց :

17  
**Յ** օղ արեան Բո, Տէր,  
 օղեա ի հոգիս,  
 նմասցէ անձն իմ :

**Ի** իւծեալս մեղօփ,  
 իւծեալ աղաչեմ  
 իւսել ինձ բարիս :

18  
**Փ** րկիչ բողութից,  
 ուրբա զիս փրկել  
 որձութեանց մեղաց :

**Ք** արիչ յանցանաց,  
 արեա զօրհնաբանս  
 եզ երգել ըզփառս :

# ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Յ. Ալբուհեան

Ս. Գ. Կոմիտեան

1. Մար-քած՝ Յի - սուս խըն - ճոյք մը ճոխ, - Խըն-ճոյք մ'աղ -  
 ուոր, սի - րոյ, կեան - քի -- Ո - րուն հուպ գալ աղ-քանն  
 ու ճոխ. Առ - հա - սա - րակ կը հրա-ւիր - ուի:


2. Մատըռուակը այս խնճոյքին,  
 Բուն խկ Ինքն է որ գտելած,  
 Մատըռուակէ փրտած զինին  
 Եւ բուքի պէս ձերմակ, սուրբ հաց:
3. Կ'ըսէ. — «Կերէ՛ք, այս՝ իմ մարմին  
 Որ կը տըրուի ձեզի համար.  
 Կը կորսուի ամեն մարմին  
 Եթէ յամէ յամառարար:
4. «Խըմեցէք այս անուշ բաժակ,  
 Կուրծքէս լեցուած ձեզի համար.  
 Կը թողում ձեզ այս հըրիտակ,  
 Որ կատարէք սիրողարար:»
5. Օ՛ն, երթանք մօտ այս սեղանին,  
 Ու մեր սըրտեր պարապ, թափուր,  
 Փըրկչին սիրով թող զեղանին  
 Ի զուր փնտուենք կեանք մը այլուր:

# ՏԱՐԱԾԵԱԼ

Ներսէս Շնորհալի

Վ.Ե. Գրիգոր Կոմիտեանի երգածին պէս

1. Տա - րած-եա - - - - - Լ ձեռք ք - - - - - նդ ձե -  
 ա - - - - - ց, Ոտք քն - դ " - - - - - տից քն -  
 թա - - - - - նալ - - - - - եա - - - - - ց, Փայտ քնդ  
 փայ - - - - - տի դա - - - - - ուր - - - - - ն պըտ - զո - - - - -



- յ, Կեանք ընդ մա - - - հու փո - - խա - ր - կե - - - լով .

1.

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց,  
Ոտք ընդ ոտից ընթանալեաց .  
Փայտ ընդ փայտի դառն պըտղոյ,  
Կեանք ընդ մահու փոխարկելով .  
Ի մէջ երկուց անօրինաց  
Կայր մերկացեալ տուողն օրինաց,  
Չոր ոչ տեսին ազգըն կուրաց,  
Բայց ի միոյն յաւազակաց :

2.

Րոպէից արեգականն  
Ըզտին արար զիշերանման .  
Ձրստուերըն քոչ արկ մերկութեան,  
Ձի մի տեսցէ աին անարժան .  
Ի մէջօրեայն նըսեմացաւ,  
Յորժամ Ադամ մեղօք մեռաւ .  
Ի յիններորդն ի լոյս դարձաւ,  
Յորժամ մահուամբ մահըն լուծաւ :

3.

Յօղէր արտօսըր ցաւազին  
Մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին  
Յորժամ լըսէր ըզձարաւին  
Բարբառելոյ իւր Միածնին .  
Նտուն քացախ խառնեալ լեղի  
Այնմ՝ որ բըղխեաց գետ յԱդենի,  
Եւ ի վիմէն վըտակ բարի  
Արբոյց տոհմին դառնացողի :

4.

Իիւծեալ յերրորդ ժամու օձին  
Ըզմիտս նախնւոյ մօրն Եւայի,  
Ի վեցն անկեալ մարդն առաջին  
Հաւանական բանիւ նորին .  
Ի սոյն ժամու Տէրն ի խաչին,  
Ձի քաւեսցէ ըզմեղս նոցին .  
Եւ յորժամ ել Ադամըն հին,  
Եդ զաւազակն ի մէջ դըրախտին :

5.

Փարելի բարբառ ընդ իմ  
Էլի, էլի առ Հայր զոչէր .  
Ձհողին կամաւ Հօր աւանդէր,  
Ձհողիս մարդկան նոյն ընծայէր .  
Երկիր հիմամբք սասանեցաւ  
Եւ վարազոյրն ընդ մէջ հերձաւ .  
Վէմք ի յինքեանց պատանեցան  
Եւ գերեզմանք մահու բացան :

6.

Քարողի ի սքանչելեացս  
Աստուած մարմնով վասն իմ խաչեալ  
Մերով բնութեամբբս մեռանի,  
Աստուած անմահ խոստովանի .  
Կըրկնավըտակ կողին աղբերբք  
Եկեղեցի իւր Հաստատի .  
Ձըրոջն մաքրի, գարիւնն ըմպէ,  
Ձնրդի ընդ Հօր փառաւորէ :

6

ԱՌԱԳ ՈՒՐԲԱՐ

Յ. Ալբունեան

Ս. Գ. Էօսիւեան

1. Կը դա - լար - ուիմ հա - մակ, Յի - սուս,

Ու կը հիւ - ծեմ, հա - լիմ իս - պառ,

Երբ կը նա - յիմ խա - չիդ ի կոյս,

Վէս սըր-տիս մէջ չի մը - նար սառ :

2. Մեռելատիպ դէմքըդ դունատ,  
Աչքերդ յերկինքս սեւեռուն,  
Խոր վէրքերովդ զիս անընդհատ,  
Հառաչներովդ կը շերտես Դուն :

3. Դալուկ ճակտիդ փուշերը սուր,  
Կը ծակծրկեն զիս կարեւէր,  
Հողիս կ'զգայ թունդ մի սարսուռ,  
Ու կը դողամ, կը սոսկամ, Տէր :

4. Ինկած առջիդ, ո՛հ, նըւաղուն,  
Յընորած կուլամ ես դառնազին  
Ձի իմ զազիր, բիւր մեղքերուն  
Ձոհը եղար Դու ի խաչին :

5. Անո՛ւշ Յիսուսդ իմ, սիրազեղ,  
Գամ մի, խնդրեմ, նայէ՛ ինձի  
Թէպէտ վայ ինձ, բիւր, Հազար Հեղ  
Սիրոյդ փոխան Գեղ ատեցի :

ԻՍՁԻՆ ԴԻՄԱՅ

Յ. ԱԼԻՍԻԱՆ

Ս. Գ. ԻՍԻԿԻԱՆ

1. Պիշ կը նա - յիմ աչ - քե-րուդ մէջ, Ուր եւ -

եթ, ուր եւ - եթ, Շո - դար սի - րոյ միշտ կայծն ան -

չէջ, Ար - փա - ւէտ, ար - փա - ւէտ:

2. Սիրածորա՛ն աչքեր երկու  
—Վառ Աստղեր— վառ աստղեր,  
Զորոնք մաՀուան շուքն աՀարկու  
է ծածկեր, է ծածկեր:

3. Ու կը փրղձկե՛մ, ու կը փրլի՛մ  
Ալ անխօս, ալ անխօս,  
Հողուոյս անդուսպ լոյժ յոյգերն իմ  
Յորդահոս, յորդահոս:

4. Կ'պոռթկան դուրս գերթ կաթնաթոյր  
Յայտաղբիւր, ցայտաղբիւր,  
Բանալով խոր խոցեր բիւր, բիւր  
Տըխրաբոյր, տըխրաբոյր:

5. Ու կը փարիմ կարմիր խաչիդ,  
Վարդ խաչիդ, վարդ խաչիդ,  
Համբոյր կուտամ սիրաիրթիթ  
Բուստ աչիդ, բուստ աչիդ:

6. Սահայն երբեք չեմ կըշտանար  
Չեմ երբե՛ք, չեմ երբե՛ք.  
Կ'ըղձամ յաւէտ ես անդադար  
Յայդ, ցերեկ, ցայդ, ցերեկ:

7. Խաչիդ շուքին տակ Հողեթո՛ւվ,  
Սիրակէզ, սիրակէ՛զ,  
Պագնել, օճել արտասուբով  
Միշտ ըզբեզ, միշտ ըզբեզ:

8. Ուստի թո՛ղ ինձ որ անպայման  
Ողբերգեմ, ողբերգեմ  
Դիւցազնական մաՀդ աննըման  
Ու վրսեմ, ու վրսեմ:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ

Սամուէլ Յ. Քէնսիկեան

Գր. Հ. Ալզունի

1. Օ՛ն, ցըն - ծա - ցէք, որ - դիք մարդ-կան, Քրիստոս յար -

եաւ, մեծ յաղ - թա - կանն, Ընկ-ճեց ըզ - մաՀն ու

դե - րեզմանն, Այս-օր տօն է Սուրբ Յա - րու-թեան:

Կարեզ փե - յար - եա -

Քրիստոս յար-եաւ, Քրիս - տոս յար-եաւ, Մեր փրը-կու -

թեան Հա - մար յար - եաւ, Այս ա - ւե - տիսն ի -

րա - րու տանք, Բերկրինք, ցըն-ճանք, եր - դենք, խայ - տանք :

1. Օ՛ն, ցնձացէք, որդիք մարդկան  
 Քրիստոս յարեալ, մեծ յաղթականն,  
 Ընկճեց ըզմահն ու գերեզմանն,  
 Այսօր տօն է Սուրբ Յարութեան :  
 Քրիստոս յարեալ, Քրիստոս յարեալ,  
 Մեր փրկութեան Համար յարեալ,  
 Այս աւետիսն իրարու տանք,  
 Բերկրինք, ցնձանք, երգենք, խայտանք :

2. Յուրա գերեզմանն այցելողներ,  
 Գոչեն «ո՛ւր է Փրկիչ Տէրն մեր»  
 Կ'ապշին, կ'ողբան կրկին փնտռեն,  
 Վախնալով զայն կորուսեր են :  
 Քրիստոս յարեալ, Քրիստոս յարեալ,  
 Մեր փրկութեան Համար յարեալ,  
 Այս աւետիսն իրարու տանք,  
 Բերկրինք, ցնձանք, երգենք, խայտանք :

3. Խօսին Հրեշտակք ազդու ձայնով  
 Թիւր կասկածներ փարատելով  
 Մեռելոց Հետ ինչո՞ւ փնտռեն,  
 Կենաց Աղբիւրն, Յարուցեալ Տէրն :  
 Քրիստոս յարեալ, Քրիստոս յարեալ,  
 Մեր փրկութեան Համար յարեալ,  
 Այս աւետիսն իրարու տանք,  
 Բերկրինք, ցնձանք, երգենք, խայտանք :

4. Աւետեցէք ո՛հ, շուտով զայն,  
 Բարձրացուցէք ցնձութեան ձայն,  
 Քարոզեցէք յարուցեալ Տէրն,  
 Բերկրացուցէք ախրած սրտերն,  
 Քրիստոս յարեալ, Քրիստոս յարեալ,  
 Մեր փրկութեան Համար յարեալ,  
 Այս աւետիսն իրարու տանք,  
 Բերկրինք, ցնձանք, երգենք, խայտանք :

Վեր. Հայկ Ե. Եսարմեան

Ս. Գ. Կոմիտեան

1. Ապ-րու-ած Կեանք մը կայ՝ մեղմ, ներ-դաշ - նակ, Անդ 'ի

Գա-լիլ-եա, ազ - դու և յըս - տակ. Տի-պար մար-դա-սէր,

եղ-բայր, Հա-րա - զատ, Խըղ - ճի ա-ռաջ-նորդ, ամ - բիծ,

ան-ա-րատ. Վէմն է ան-սա-սան, ճամ-բայ փըր-կա - րար,

1 mo  
 ու - ղիզ, ա - պա - հով ու եր - ջան-կա - րար :

2 do *խորհրդ*

ու եր - ջան - կա - րար: Փա՛ռք Քեզ, Յա - րուց - եալ, Ար - քա՛յ,

ա - խոյ - եան. Տէ՛ր ա - մե - նա - կալ, Փա՛ռք Քեզ, փա՛ռք

Քեզ, փա՛ռք Քեզ, յա - լիա - եան:

2. Մատուցուած ՁՈՂ մը կայ — սուրբ Պատարագ,  
Անդ ՚ի Գողգոթա, Գառնուկ երկնառաք.  
ՄաՀն անոր խօսուն, մաՀն անոր անմաՀ,  
Կեցուց ՍաՀն Հզօր, սանդուխ դէպ իր ԳաՀ.  
Փրկի՛չ անձնուէր, քու մաՀն աննման,  
Աղբիւրն է սիրոյ յաւիտենական:  
Փա՛ռք Քեզ ... եւն.:

3. Յաղթական ԱՆՁ մը կայ — սուրբ եւ Հըզօր,  
Անդ ՚ի վեր բաղմած, ներշնչողն այսօր.  
Յարուցեալ Փրկիչ, Արքայ փառաւոր,  
Իշխան, կեա՛նք անբաւ, սրտով վեՀ, անդորր.  
Ընկճեալ յաղթեց ան, ո՛հ, անարդ մաՀուան,  
Բաղուկ Բարձրելոյն, մեծ Եղբայր մարդկան:  
Փա՛ռք Քեզ ... եւն.:

1. Զայնդ ա - Հա - լոր ու սաստ - կա - շունչ, Հո - վի մ՛ ճայ - նին ճիշդ

նը - մա - նակ, Լե - ցուց սըր - տերն մըլ - տա - մըր - մունչ, Վեր -

նա - սու - նի եր - դի - քին տակ: Ա - մէն:

2. Հրանիւթ շողերդ բոցեղէն,  
Լեզուներու տիպ Հանդունակ,  
Նրկարեցան վար երկինքէն,  
Վերնատունի երգիքին տակ:
3. Մենաչնօ՞րհ մ՛չը այս, ով Տէր,  
Կամ բացառի՞կ մի պարագայ.  
Ամենուն ալ չե՞ս խոստացեր  
Նոյն Աստուածը չե՞ս Դու Հիմայ:
4. Թափէ՛ կայծերդ վառ երկինքէն,  
Գըթոտ Հոգի, Դու անաչառ  
Մեռա՛ծ, մարա՛ծ դէՀ կիրքերէն  
Վըրայ սըրտիս իմ անպատկառ:
5. Թող ըսպառի՛ն, աճի՛ւն դառնան  
Բոլոր մեղքերըս մաՀարեր,  
Հողիս ըլլայ Քեզ Սրբարան,  
Կեանքս ողջակէզ, Քեզ ի նուէր:

ՎԵՐ ՆԱՅԵՑԻՔ

Վեր. Հայկ Եսայիական

Գր. Հ. Այգուճի

1. Օ՛ն, դի-տե-ցէ՛ք, Երկինք յայտնի կը հըռ-չա-կեն,

Վեհ հիմնադրին մեծ զօրութիւնն այդ բարձունքէն .

Օ՛ն, լը-սե-ցէ՛ք, հա-մա-տա-րած ու հո-լա-թեւ,

Տի-րա-պե-տէ այդ զօրութիւնն ան-հու-նա-տեւ :

Մեծ Զօրութեան Մեծ Զօրութեան վե՛ր նա-յե-ցէք :

Մեծ Զօ - րութեան Մեծ Զօ - րութեան վե՛ր նա - յե - ցէք :

Օ՛ն, դիտեցէ՛ք, Երկինք յայտնի կը հուշակեն,  
 Վեհ հիմնադրին մեծ զօրութիւնն այդ բարձունքէն .  
 Այդ զօրութիւն տիրապետէ անհունատեւ :  
 Օ՛ն, լսեցէ՛ք, Համատարած ու հոլաթեւ,  
 Մեծ Զօրութեան . . . վե՛ր նայեցէք :

Օ՛ն, խորհեցէ՛ք, Երկինք յայտնի կը հուշակեն,  
 Իմաստութիւն ամեն ուրէք, ամեն տեւ,  
 Հայն խորհեցէ՛ք, ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ . . . զայն փնտռեցէք .  
 Տէր մ՛ունի այդ իմաստութիւն . զայն դա՛մ էք :  
 Իմաստութեան . . . վե՛ր նայեցէք :

Օ՛ն, պաշտեցէք, Երկինք յայտնի մեզ կ՛աւետեն,  
 Թէ Գողգոթան Սիրոյ Աղբիւրն յայտնէ արդէն .  
 Մտածեցէք — ՍԷՐ Է ԱՍՏՈՒԱՅ — սիրոյ միայն  
 Գիտենք, կ՛ապրինք . անով յաղթէ մարդն յաղթական :  
 Սիրոյ Համար . . . վե՛ր նայեցէք :

Հապ օ՛ն, Հագէք Սէր, Զօրութիւն, Իմաստութիւն  
 — Ասոնք յուսով ու հաւատքով են Հաստատուն —  
 Երեք սիւներ մեր Հրաշակերտ տիեզերքին,  
 Երեք հիմեր Հզօր մարդոց ըզձոտ կեանքին :  
 Անմահութեան . . . վե՛ր նայեցէք :

3. Աւրուհեան

Էօմիւրեան-Այգուցի

Մ-նր

1. Սրբու-թիւնըս պղծու-թիւն մ'է յի-րա - լի, Որ-մէ

թերևս մէկը խաբւած գըրաւուի, Ո՛հ ինչ կիրքեր սըրախ

Piu Lento

խորը կը փըր - փրին Առանց Քե-զի, Առանց Քե - զի,

Tempo

f

ad lib

Ո՛հ, ինչ կիրքեր սրախ խորը կը փըր - փրին, Առանց Քե -

rit poco a poco  
զի, Առանց Քե - զի:

dim pp

2. Գորովս համակ փաղաքշանքով սընքուրուած,  
Ատելութեան ծանր սուին մ'է, ով Աստուած.  
Սէրս ալ նոյնպէս կաթիլթուը մ'է տրտմանքի,  
Առանց Քեզի:
3. Անձնուէրի դիմակին տակ համօրէն,  
Տէր իմ, աւա՛ղ, մակարոյծ մ'եմ անօրէն,  
Սեւ տըղրուկ մը արիւնարբու, փանաքի,  
Առանց Քեզի:
4. Բարեպաշտի ցոյքը ունիմ թէեւ ես  
Սակայն աւա՛ղ, առտուան դով ցողին պէս  
Արեւուն տաք շողէն խկոյն կը հալի,  
Առանց Քեզի:
5. Բարեգործի համբաւովը փըքացած,  
Ոչընչութիւն մ'են իմ համակ սիգապանծ.  
Թըզնուոյն պէս բարձրավիզ, բայց, անբերրի,  
Առանց Քեզի:

Հայկ Ե. Եսարսմեան

Ս. Գ. Էսփրեան

1. Շըր - ջե - ցայ Տէր իմ Աստ-ուած ծով ու ցա-մաք, փոր-ձե - ցի,

լեռ, ձոր ու դաշտ, ահ շա-րու - նակ. Դի-տե - ցի լու-սին, ա - րեւ,

աստղերն իսփիւռ. Սար-սե - ցայ կո-հակնե - րու կո-ծու-մէն բիւր :

Կրկնեց

Ձը գը - տայ, ով Տէր Յի-սուս, Քեզմէ ի դատ խօ-սող Հոգ-ւոյս,

Քեզմէ ի դատ Քեզմէ ի դատ չը գը - տայ խօ - սող Հոգ-ւոյս :

2. Ծաղիկներ բուրմնալից հովիտներ գեղ,  
Պարզեցին եղեմային տեսիլք շքեղ :  
Հալեցան մեղմ մեղեդիք թռչնոց երգին,  
Սեղմեցին շատեր իմ ձեռք եռանդազին :  
Ձը գըտայ, ո՛վ Տէր Յիսուս  
Քեզմէ ի դատ դպչադ Հոգւոյս :  
Քեզմէ ի դատ, քեզմէ ի դատ,  
Ձը գըտայ դպչադ Հոգւոյս :

3. Երգեցին բանաստեղծներ դարերու մէջ.  
Շարեցին զմայլումի կամ սոսկման վէճ,  
Ճառեցին, Տէր, գիտուններ լոկ երեւոյթ .  
Գըրեցին «կարգ ու օրէնք» առանց սիրոյդ :  
Ձը գըտայ, ո՛վ Տէր Յիսուս  
Քեզմէ ի դատ յուզիչ Հոգւոյս :  
Քեզմէ ի դատ, քեզմէ ի դատ,  
Ձը գըտայ յուզիչ Հոգւոյս :

4. Հայր եւ մայր, որդի, եղբայր, քոյր թանկազին,  
Ազգական, մարդ մտերիմ կամ այր ու կին՝  
Ոչ երբեք մօտ են ինձի Տէր քեզ նման,  
Ոչ երբեք հոգիս հոգւով սիրել կըրնան :  
Ձը գըտայ, ո՛վ Տէր Յիսուս  
Քեզմէ ի դատ սիրող Հոգւոյս :  
Քեզմէ ի դատ, քեզմէ ի դատ,  
Ձը գըտայ սիրող Հոգւոյս :

5. Երբ կը զգամ թերութիւններս բազմատեսակ  
Երբ յիշեմ մեղքերս ահեղ ու անառակ,  
Խըղճահար ու բեռնաւոր կը թափառիմ,  
Կը գոչեմ, սրտաճմլիկ, որո՞ւ փարիմ :  
Ձը գըտայ, ո՛վ Տէր Յիսուս  
Քեզմէ ի դատ փրկիչ Հոգւոյս :  
Քեզմէ ի դատ, քեզմէ ի դատ,  
Ձը գըտայ փրկիչ Հոգւոյս :

14 ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԲԵՐԴԵ Է ՀԱՍՏԱՏՈՒՆ

Մարթին Լուտեր

Ս. Գ. Կոմիտեան

1. Աստ-ուած մեր բերդն է հաս-տա-տուն, եւ է հը-գոր պաշա-  
 ցրբ վիշտ պա-տէ եւ փոր-ձու-թիւն, ինքն է քաջ օգ-նա-

պան մը. Ձի խա-ւա-րի իշ-խան, Ար-թուն եւ  
 կան մը:

ժը-րա-ջան, Դա-րա-նա-մուտ կ'ըլ-լայ, Բըռ-նել մեզ

կը փու-թայ, Որ տա-պա-լէ ան-դուն-դը:

2. Մեր զօրութիւն է սրնետի,  
 Մեր քաջութիւն խոտան է.  
 Այլ զօրապետ կայ խիստ արի,  
 Խաղաղութեան իշխանն է:  
 Ո՞վ է այս զօրակալ.  
 «Յիսուս Քրիստոս Օծեալ»:  
 Փորձիչը նա յաղթեց,  
 Եւ մահը խափանեց.  
 Ամենազօր Փրկիչ է:

3. Թող սատանան յոյժ աշխատի  
 Իւր դաւերով բռնել մեզ.  
 Մենք վախ չունինք զի Տէրն բարի  
 Կարող է պաշտպանել մեզ:  
 Դեւք ալ պատիր, անթիւ,  
 Մեզ պաշարեն խըստիւ,  
 Կրնանք հաստատ կենալ  
 Մինչ Տէրն ամենակալ  
 Անյաղթ մեր ապաւէնն է:

15 ԱՂՕԹԻՍ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Ակիլիսէ

Ս. Գ. Կոմիտեան

1. Մու-րաց-կան մը չըլ - լամ թող, Տէր, Չը վար-ժը-

ւին թող իմ ձեռ-քեր Շա-հու հա - մար լով

սը-նո - տի Բուրվառ շար-ժել ա - ռանց խուն - կի:

2. Գիշեր, ցորեկ երբ արցունքով  
 Ես կ'աղօթեմ անկողնիս ջով.  
 Մի պատասխան տուր, որ գիտնամ  
 Թէ սոսկ աղօթք չէ բաւական:

3. Երբ իմ խնդիրքս չես կատարեր,  
 Այդ իսկ սեպեմ Քու անհուն սէր,  
 Թէ իսկ չտալդ ինձ պատասխան,  
 Պատասխան մ'է — սիրոյդ նշան:

4. Աղօթքներուս նախ պատասխան  
 Կեանքս ու հաւատքս, գերծերս թող տան  
 Պատասխանին էն մեծն սեպեմ  
 Աղօթքի սուրբ պաշը վսեմ:

Յ. ԱՆՐԱՆԵԱՅ

Ս. Գ. ԷՍԻԿԻԱՆԻ

1. Խո - րա - նիդ առ - ջեւ կան-թե - դին նը - ման, Ան-բիծ  
Կը բաղ - ձամ ես ալ լու-սովդ յա - լիա - եան, վա-ռիլ

ու պայ-ճառ, ան-բիծ ու պայ - ճառ :  
այժմ և յար, վա-ռիլ այժմ և յար :

2. Խորանիդ առջեւ, մոմերուն նրման,  
Կը բաղձամ ես ալ,  
Կը բաղձամ ես ալ :  
Հատնիլ ու հատնիլ գեղովդ աննրման,  
Ի Բեզ էանալ,  
Ի Բեզ էանալ :
3. Խորանիդ առջեւ, խունկին նրմանակ,  
Ծրէն ու ծրէն,  
Ծրէն ու ծրէն :  
Վերանա՛լ, անցնի՛ր կամարն ու փայլակ,  
Աս մութ աշխարհէն,  
Աս մութ աշխարհէն :
4. Կը բաղձամ, Տէր իմ, ու հատնիլ Բեզի,  
Բոյրով անուշիկ,  
Բոյրով անուշիկ :  
Ուր, սուրբերն ամեն անո՛ւշ մեղեդի  
Կ'երգեն ցընծունակ,  
Կ'երգեն ցընծունակ :

Հայկ Ե. ԵԱՐՏՄԵԱՆԻ

Ս. Գ. ԷՍԻԿԻԱՆԻ

1. Ար-սու-րա - ցի ա - դո-թեւ ու շըր-թամք մա-քուր

Քա-ցի Աբ. Գիրք և կար-դա - ցի ձայ-նով մը կուռ,

Երգ եր-գե - ցի, մե-լա-մաղ - ձիկ շեշ-տով թըռ-թուռն,

Յա-ճա - խե - ցի սըր-տով մը գոհ, ա - դո-թա - տուն :

22082-60

ԿԵԼՈՒՆԵՐԳ

Musical notation for the first system of 'ԿԵԼՈՒՆԵՐԳ'. It consists of a vocal line and a piano accompaniment line. The lyrics are: Այս ամենքն ալ, լոկ իմ ան - ձիս հա-մար ը - ըրի,

Musical notation for the second system of 'ԿԵԼՈՒՆԵՐԳ'. The lyrics are: Լոկ իմ ան - ձիս, Ե - ըն-ւոյ - թին հա-մար ը - ըրի:

2. Խօսք շատցուցի, վէճեր ըրի, լեզուվ ճարտար,  
Յօղուածներու մէջ փնտռեցի իմաստն արդար,  
Օրէնք դրրի եւ կազմեցի ընկերութիւն,  
Դպրոցներու պաշտպան եղայ հպարտ արթուն:  
Այս ամենքն ալ, ևն.:
3. Քրտակ բացի, դրրամ տուի առատօրէն,  
Ուրիշներն ալ ես դրդրեցի անձովս նորէն.  
Նշանաւոր մարդոց եղայ ծանօթ ընկեր,  
Անձամբ ճանչցայ բանաստեղծներ եւ գիտուններ:  
Այս ամենքն ալ, ևն.:
4. Քարոզեցի եւ խօսեցայ իբրեւ մեկնիւն,  
Մարդ լացուցի, զարմացուցի կիրքով յուզիւն,  
Այցելեցի, տեսայ հիւանդ զրտայ աղքատ,  
Ժողովրդական մարդ սեպուեցայ միշտ խանդակաթ:  
Այս ամենքն ալ, ևն.:
5. Ներէ, Փրկիւն, դառնամ քեզի, ուղղեմ ճամբաս,  
Կամքս կամքիդ թող միանայ միշտ հանապաղ,  
Անհետանայ, մեռեալ մեռնի, կեղծ անձն իմ մէջ.  
Ապրիմ անկեղծ քեզ ծառայող, Տէր միւնչեւ վերջ:  
Ու յաղթանակն լոկ քու անձիդ համար առնեմ,  
Քու սուրբ անձիդ արքայութեան համար առնեմ:

ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ

Հայկ. Ե. Եւրոպական *էրֆ իմ վիզյոնքս արթն-իւնք* Ս. Գ. Կոստանի

Musical notation for the first system of 'ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ'. It consists of a vocal line and a piano accompaniment line. The lyrics are: 1. Երբ հէք մո - լար ես թա-փա - ուիմ, մը - տա - չը -


Musical notation for the second system of 'ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ'. The lyrics are: ւառ, Ոհ, երբ ձըն - շեն մը - տա - ծու - մի մութ խընդիր -

Musical notation for the third system of 'ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ'. The lyrics are: ներ, Ու խըն-ը - լին ճակ-տիս վը - րայ հոծ կըն-ձիւ-ներ:

Musical notation for the fourth system of 'ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ'. The lyrics are: Երբ իմ արթն-իւնքս արթն-իւնքս արթն-իւնքս

Musical notation for the fifth system of 'ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ'. The lyrics are: Երբ իմ արթն-իւնքս արթն-իւնքս արթն-իւնքս

Իմ սիրտ զբառներս սպեղնաբեր ինչ որ Տուրբա



Ո՛վ Սուրբ Սե - դան , ո՛վ Ա - ուջ-նորդ Աստ-ուա - ծա - բան :



2. Երբ իմ վիշտերս անբուժելի վէրքեր բանան ,  
Ունակութեան շղթաներով գերիանամ .  
Կամ հեծեճանքս անձիս վըրայ կըրակ տեղան ,  
Պիտի փարիմ պատուանդանիդ , ո՛վ Սուրբ Սեղան .  
Յայնժամ Քու մէջ պիտի գտնեմ Սիրոյ Ծորան .  
Իմ սիրտիանքն սպեղանին քեզմէ ծորան :
3. Երբ անձքս խուլ անհունութեան ահովն յուզուի ,  
Իբրեւ անդէկ նաւ ալեկոծ խորասուզուի ,  
Ու տիեզերքն , ինձ երեւնայ անդունդ մ'ունայն ,  
Կամ կեանքն անել , ահեղ ճամբայ , ճիգ մ'ընդունայն .  
Ինձի համար ո՛վ , Սուրբ Սեղան , Քու մի եղերք  
է , Կենսատու , Աստուածաշունչ , Լոյս տիեզերք :
4. Երբ իմ մեղքերս բռնկեն դժոխք բաշմաշարշար  
Եւ ինձ ասնն յուսահատներ ձայնով անձար  
Թէ կեանքդ ամբողջ մահ մ'է դաժան-ցաւէն դատուած  
Պիտ' անմահ շունչ գտնեմ քու հետ , նոյն խիզ գԱստուած ,  
Կաթիլ մ'ունմպէդ ինձ ովկէան մ'է , ո՛վ Սուրբ Բաժակ .  
Մահուան մէջ ալ Քու հետ , Քու հետ , Սիրոյ ճաշակ :
5. Երբ իմ հոգիս , ո՛հ , բռնկի իղձով անչէջ ,  
Ու հոգեկան ուժերս մղուին շարժին իմ մէջ .  
Երբ փափաքներս բարձրաթռիչ բանան թեւեր ,  
Ու սաւառնին երկնակարօտ վե՛ր , դէպի վե՛ր .  
Յայնժամ քու հետ պիտի գտնեմ , ո՛վ Սուրբ Սեղան ,  
Հոգւոյս կայանն ու հացկերոյթն անմահական :
6. Աստուածային խորհուրդ սիրոյ լեցուր հոգիս .  
Բղիւէ Հաւատք , շնորհէ Յոյս , Սէր , ողորհէ զիս :  
Որդիացուր Հայրանուէր սիրոյդ կնքով .  
Փրկիչ Յիսուս , փրկեալ հոգիս պահէ Քու քով ,  
Քու հետ անմահ , Քու հետ ուրախ , ո՛վ Սուրբ Սեղան ,  
Սէր յաւիտեան-Սուրբ էութեանս , Սուրբ պատասխան :


ԱՐՈՒՒՂ ԱՌՋԵՒ

Յ. ԱՆՐԱՆԵԱՆ


Ս. Գ. ԷՈՒՄԵՐԵԱՆ



1. Ա - թո-ռիդ առ - ջին , զերթ ան-խօս ար - ճան ,
2. Եւ քա - նի նա - յիմ , այն - քան ա - լե - լի ,
3. Կը դե - դեց - կա - նամ ես ալ հետ - ըզ - հետ ,




- Աջ - քերս յա - ուծ Քեզ , անթարթ ու արբ - շիռ ,  
Հոգ-ւոյս բո - վան - դակ թա-փո-վը ուժ - գին ,  
Լոյ-սէդ , շո - դե - ըէդ ո - զոդ-ուած հա - մակ ,



- Կը նա - յիմ ան - յադ , լուռ ու ծըն - ըա - դիր ,  
Նա - յիլ կու - դեմ միշտ , ի՞նչ փոյթ թէ սա - հին  
Հո - գիս ե - ըազ - կոտ , եր - գե - լու ա - տակ ,



- Լու - սա - շող դէմ - քիդ , գե - ղոյ ջինջ ծո - բան :  
Վայր-կեան-ներ , ժա - մեր հան-գոյն փայ - լա - կի :  
Նը - լա - գել , թըրթ - ուալ կը ցան - կայ յա - լէտ :



ԱԿԻԼԻՅԷ

Ս. Գ. ԷՕՄԻԼԵՅԱՆ

1. Թէ արեւ - ներ մե - ծա - պայ - ծառ Մշտա - վառ,

բորբ հըս - կայ ջա - հեր Ոս - կե - զօ - ծեն ա - նոր

կա - մար. Դեռ իմ եր - կինքս չեն յօ - ըր - ներ:

Խմբերգ

Եր - կինք լու - սոյ, սի - րոյ ի՞նչ է, Թէ Փրկչիս

դէմքն չը ճա - ճան - չէ, Հեշտ գա - րուն - ներ վար -

գա - բուր - եան, Սոսկ ա - նոր գիրկն կը մի - ա - նան:

1. Թէ արեւներ մեծապայծառ  
Ոսկեգօծեն անոր կամար.  
Մշտավառ, բորբ հսկայ ջահեր  
Դեռ իմ երկինքս չեն յօրիներ:  
Երկինք լուսոյ, սիրոյ ի՞նչ է,  
Թէ Փրկչիս դէմքն չը ճաճանչէ.  
Հեշտ գարուններ վարդաբուրեան,  
Սոսկ անոր գիրկն կը միանան:

2. Դեռ իմ երկինքս չեն յօրիներ,  
Թէ եւ արցունք ու խաչ դաղբին,  
Եւ միանան սերտ հողիներ  
Համբոյրներու մէջ անմեկին:  
Երկինք լուսոյ, սիրոյ ի՞նչ է,  
Թէ Փրկչիս դէմքն չը ճաճանչէ.  
Հեշտ գարուններ վարդաբուրեան,  
Սոսկ անոր գիրկն կը միանան:

3. Համբոյրներու մէջ անմեկին  
Երկինք մը շուրջս թէ պարուրէ  
Երգ ու պաշտանք, խունկ, բարութիւն  
Ես դեռ հարցնեմ «Երկինքն ո՞ւր է»:  
Երկինք լուսոյ, սիրոյ ի՞նչ է,  
Թէ Փրկչիս դէմքն չը ճաճանչէ.  
Հեշտ գարուններ վարդաբուրեան,  
Սոսկ անոր գիրկն կը միանան:

4. Ես դեռ հարցնեմ «Երկինքն ո՞ւր է».  
Ձոր կը փնտռեմ հեռու վայրեր,  
Հոս իսկ համակ դրախտ բուրէ,  
Երբ սրախս մէջ կ'ապրի Ի՞նչ Սէն:  
Երկինք լուսոյ, սիրոյ ի՞նչ է,  
Թէ Փրկչիս դէմքն չը ճաճանչէ.  
Հեշտ գարուններ վարդաբուրեան,  
Սոսկ անոր գիրկն կը միանան:

Արեակ Տ. Մահիսեան

Գր. Հ. Այգուճի

Շնորհաւոր-ւո՛ր նոր տա-րի, կը մաղթենք արդ սըր-տա-գին

Բո - լոր ա-նոնց, որ ամբողջ անցեալին մէջ մը-ղե - ցին

Հա-ւա-քա-բար կամ լըք-ուած, միս մի-նակ ու ա-ռան - ձին

Չո-հա-պա - հանջ պայ-քա - րը Չա - րի-քին դէմ կեղծի-քին՝

Յաղ-թա-նա - կը շա - հե - լով, կամ ջախ-ջախ-ուած իյ-նա - լով,

Պար-տա-կա-տար զին-ւո - րի գիտակցութեամբն ան-խը - ուով :

Շնորհաւոր նոր տարի, կը մաղթենք արդ սրտազին  
 Բոլոր անոնց, որ ամբողջ անցեալին մէջ մղեցին  
 Հաւաքարար կամ լքուած, միս-մինակ ու առանձին  
 Չոհապահանջ պայքարը Չարիքին դէմ կեղծիքին՝  
 Յաղթանակը շահելով, կամ ջախջախուած իյնալով,  
 Պարտակատար զինուորի գիտակցութեամբն անխուով :

Շնորհաւոր նոր տարի, յաղթականին, իյնողին,  
 Այլ մանաւանդ Պարտեալին որ չի տուաւ կուէն խոյս  
 Ուրաց կուրծքով բազմալէր՝ չի վհատող, քաջացոյս,  
 Ոգորեցաւ մահաճիգ՝ շարունակել իր ուղին,  
 Սպաննացող վտանգէն զինով՝ դարձած դիցազոր,  
 Մինչ ուրիշներ դասալիք կ'ըլլային շուրջն ամէն օր :

Շնորհաւոր նոր տարի, երջանկութի՛ւն անսպառ  
 Այն մարդուն որ անկուճէն կըստեղծէ թե խոյացման  
 Սխալներէն կը շինէ իր վերելքին պատուանդան,  
 Չախողուածքէն կը հիւսէ յաղթապսակ երկնափառ,  
 Ու շաւաղեր կորուստներ, անոնց վրայ չըզգար ցաւ,  
 Այլ կը խլէ ներկայէն ինչ որ Անցեալն զլացաւ :

Սամուէլ Յ. Քէնցիկեան

Ս. Գ. Էօմիւրեան

1. Բա - րե - կամ - ներ, և - դէք զու - արթ, Ու - րա - խու - թեան

ա - տեն է արդ. Ալ մի կե - նաք լը - ուն ու մունջ

Թող բե - րան - ներ հա - նեն մըր - մունջ:

Խմբերգ

Օ՛ն, ծափ զար - նենք, պա - րենք, եր - գենք,

Օ՛ն, ծափ զար - նենք, պա - րենք, եր - գենք,

Դէմ - քով բեր - նով ար - տա - յայ - տենք,

Դէմ - քով բեր - նով ար - տա - յայ - տենք,

Ու - րա - խու - թիւն և ցըն - ծու - թիւն, Քան - զի այս է Հար - սան - եաց տուն:

2

Եկէք զուք ալ, ով պատանեակք,  
Որ կը կոչուիք Երզնի Սմբակ.  
Միացէք մեզ, ձայն վերցուցէք,  
Լեցուն թորով զեղզեղեցէք:  
Օ՛ն, ծափ զարնենք, ևն.:

3

Նուազածու խումբն ալ թող դայ  
Եւ մեզի հետ ընկերանայ.  
Թող նուազեն տաւիղ, ջութակ,  
Քնար, օրկան և դոռ դաշնակ:  
Օ՛ն, ծափ զարնենք, ևն.:

4

Ձարնեն թմբուկ, դափ ու ծնծղայն,  
Հնչեցնեն սրինգ, տան ձայն  
Փողեր, պէս պէս նուազարան,  
Երկիր գետին թող դղրդան:  
Օ՛ն, ծափ զարնենք, ևն.:

5

Բարեկամներ՝ ազգականներ  
Անոյշ հոտով՝ իւզով օծուեր  
Հարսանիքի տուն են եկեր,  
Խնդու թեամբ ձեզ ունկնդրել:  
Օ՛ն, ծափ զարնենք, ևն.:

ԾԱՆ. — 1էն 5րդ համարները երգուելու են դասին տունը, իսկ 6րդէն 9րդը դասին ետ:

ՏԻՊԱՐ ԸՆՏԱՆԻԿ

Սամուել Յ. Գեֆֆիկեան

Բարեփոխեց Վեր. Հ. Ն. Նարսիսեան

Ս. Գ. Էօսփաբեան

1. Ո՛հ, ի՛նչ ա - նուշ կեանք ու կեն-ցաղ, Տի-պար տան մը  
Բու-րին, բըղ-խին ջերմ հա - մակ-րանք, Հոն դայ - լա - կի

Fine

սուրբ յար-կին տակ. Եւ ի՛նչ սի-րուն, օրհն-եալ, չըք - նաղ,  
տան գեղ-գե-ղանք:

Իան ըն-տան-եաց գողար յի - շա-տակ. Հօր, մօր դս - րով

D. C.

ու գուր-գու-րանք եղ-բօր, քը - րով սէրն ու յար-գանք,

2. Խօսակցութիւն հըմայք մ'է հոն  
Եդեմական բոյր կը բուրէ,  
Փայլի պանծայ կարգն ու կանոն,  
Սիրոյ օրհնքն հոն կը տիրէ.  
Տիպար տան մէջ չկայ նախանձ,  
Պատուելու մէջ փափկանկատ՝  
Մրցում մը կայ՝ յոյժ գերազանց,  
Ու քաղցրութիւն, սէր մեղրակաթ:

3. Առոյգ զաւկունք բերդանման,  
Ազնուազարմ, առողջ, կայտառ,  
Աշխատասէր, քաջ միաբան,  
Կանգնեն մեծ տուն-չէն ու պայծառ  
Ծընողք, ձագունք, օ՛ն, ազգականք,  
Ուրախ, զուարթ, ցնծան, խայտան.  
\*) Դրախտի-ընտանիք՝ տայ արձագանգ  
Երգն ու դաշնակ տիպար Հայ տան:

(\*) Դրախտի-ընտանիք՝ Խրիստոս Հայրիկն գրտայն է եւ «իւր» Տի Յայտաւոր է սեպտեմբեր

ՕՐՐԵՐԳ

Աղիւլիկ

Ս. Գ. Էօսփաբեան

1. Ինա-ցիր հո - գիս, մու-շիկ, մու-շիկ, Փա - կէ աչ - քերդ

յու - շիկ յու - շիկ. Մինչ մայրդ զուարթ, ար-թուն աչ - քով

Արկներգ

Կը հըս - կէ քեզ օր - րա-նիդ քով: Ինա -

ցիր աղուորս, լը-ռիկ, հան - դարա երբ մօրկանդ հետ աչ-քով ան-

թարթ Մա - ղիկ, թռչուն, երկինք, սար, ձոր, Ձե -

փիւռ, աղբիւր, անտառ, ծոր - ծոր: Կեր - դեն ա-նուշ օ -

րօր, Կեր - դեն ա-նուշ օ - րօր:

2. Ննջէ, ննջէ անուշ հողեակ  
Մինչ քունդ՝ խաղաղ, անմեղունակ  
Եւ մինչ ժխոր, ալիք կեանքին,  
Չեն խռովեր հողիդ անդին:  
Քնացիր աղուորս, եւայլն.

3. Քնացիր մանկիկ, երբ քեզ համար  
Կեանք և երազ դեռ նոյն, հաւասար:  
Դուն քուն, իսկ ես աչքով արթուն  
Ապրինք, ապրինք կեանքն երազուն  
Քնացիր աղուորս, եւայլն:

4. Ննջէ՛, նիրհէ՛ իմ անուշիկ,  
Երբ կը շարժեմ օրոցդ զողարիկ,  
Սիրաս՝ յոյսերով կ'ըլլայ օրօր,  
Աշխարհ շարժի, կարծես, բոլոր:  
Քնացիր աղուորս, եւայլն:

5. Փակէ աչքերդ, ո՛հ, մինինիկ  
Լո՛ւռ ծառ, երկինք, թռչուն, ալիք  
Քնացի՛ր, մինչեւ իմ հեղանալ  
Համբոյրներէս ալ արթնաս:  
Քնացիր աղուորս, եւայլն:

Վեր. Հայր Ե. Եսրսիբաճ

Ս. Գ. Կոմիտաս

Allegretto grazioso

1. Ո՛վ է բա-րի այդ տը - դան, Հայ ճագուկ մը հայ-րի - կին,

Հոյ-սին հեա ա - րե-զա - կան ծիւ-ծիւ-ին հեա թռչ-նի - կին,

Կու-տայ համ-բոյր կ'եր-գէ լոյս, Թո-թո-վե-լով բա - րի լոյս,

Կու-տայ համ-բոյր կ'եր-գէ լոյս, Թո-թո-վե-լով բա - րի լոյս:

Հայ ձագուկ մը հայ-րի - կին, Հայ դառնուկ մը մայ-րի - կին,

Հրեշ-տակ մը առա-ւօտեան, Պըլ-պու-լիկ մը և մեր տան:

2. Ո՞վ է մաքուր այդ տղան,  
 Հայ ձագուկ մը մայրիկին,  
 Մաքուր ջուրին բարեկամ.  
 Փայլուն, նման արեգին,  
 Գանդուր մաղեր թելթելիկ,  
 Աչուրները դոհարիկ: Խմբերգ.

4. Ո՞վ է խոհեմ այդ տղան,  
 Հայ լեզուին, ա՛հ սիրահար.  
 Գիրք, գրքիչ, գրքադարան,  
 Քաղցր են իրեն համար.  
 Չը մոռնար լեզուն բընիկ.  
 Կը սիրէ իր Հայրենիք: Խմբերգ.

3. Ո՞վ է խնդուն այդ տղան.  
 Հայ ժպիտ մը քոյրիկին.  
 Եղբայրիկ մը անըման,  
 Ոսկեմանեակ օղակին,  
 Երգող, ցատկող մեղրանուշ,  
 Մեր դայլայլիկն ի՞նչ անուշ: Խմբ.

5. Ո՞վ է զինուոր այդ տղան,  
 Հայ առիժ մը Հայ ազգին,  
 Իրաւասէր եւ պաշտպան,  
 Ապրող, մեռնող իր խօսքին,  
 Կ'ապրի Հայ մարդ, մարդասէր  
 Սիրող Աստուածն և ընկեր: Խ.

6. Ո՞վ է անմահ այդ տղան,  
 Վե՛հ Հայութեան վե՛հ հոգին,  
 «Աստուած» եւ «Ազգ» կը կարգան  
 Անոր ճակատին վրայ անգին,  
 Երկինք ժրպտի վերէն քեզ,  
 Ո՞վ Հայորդի հեռատես:  
 Հայ ձագուկն ես «Հայրիկին»,  
 Հայ առիժ մը «Մայրիկին»,  
 Հրեշտակն ես առաւօտեան  
 Ու պըլպուլ մը Հայոց Տան:

Գ. Շմառնեան

Ս. Գ. Խմբերգ

1. Սիրէ հայր թէ ըլլայ Աղքատ, տընանկ, անկարող,  
 Հագուստները հին ու մին, Դռնէ ի դուռ մուրացող:

Հագուստները հին ու մին, Դռնէ ի դուռ մուրացող:

Խմբերգ rit.

Անունն է հայ՝ պարտ է քեզ Սիրել ըզնա հայու պէս:

1. Սիրէ հայր թէ ըլլայ  
 Աղքատ, տընանկ, անկարող,  
 Հագուստները հին ու մին,  
 Դռնէ ի դուռ մուրացող:  
 Անունն է հայ՝ պարտ է քեզ  
 Սիրել զնա հայու պէս:

3. Սիրէ հայր թէ ըլլայ  
 Հայր-սուրբ, տէրաէր, վարդապետ,  
 Վրան փրօն, ծոցը խաչ,  
 Կաթողիկոս, Հայրապետ:  
 Անունն է հայ՝ եւայլն:

2. Սիրէ հայր թէ ըլլայ  
 Հարուստ, փարթամ, մեծատուն,  
 Ունենայ պէյ, էֆէնտի,  
 Կամ ամիրա պատուանուն.  
 Անունն է հայ՝ եւայլն:

4. Սիրէ հայր թէ ըլլայ  
 Բողոքական, այլ կրօն,  
 Ըստ քո կարծեաց անպաշտ,  
 Հերետիկոս, անկրօն.  
 Անունն է հայ՝ պարտ է քեզ,  
 Սիրել զնա հայու պէս:

Վ. Մ. Մանգալեան

Ս. Գ. Կոմիտեան



1. Ո՛՛Հ ԹԷ ԵՍ աԼ Հա-յաս-տա - նի վայ-լէ-ի այն դաշտեր ու  
2. Ո՛՛Հ ԹԷ ԵՍ աԼ Հայ-րե-նիքն իմ՝ Գիտնայի քու պէտքերդ բո-  
3. Սի-րոյս Հա - մար քե - զի կուտամ կեանքիս սթերն ու զօրու-



դար լայ-նա-ծա-ւալ, լայ-նա-ծա-ւալ, Ո՛՛Հ ԹԷ ԵՍ աԼ կա -  
լոր Եւ քեզ տա-յի, եւ քեզ տա-յի Մա-ռա-յու-թիւն Հա -  
թիւն Ո՛՛վ Հայ-րե-նիք, ո՛՛վ Հայ-րե-նիք, Եւ իբ-րեւ մօր մը



րե - նա - յի իմ Հայ - րեն - եաց սի-րոյն Հա - մար իմ  
լա - տա - րիմ Գո - րո - վա - գութ սի - րե - լի մօր իբ -  
բա - րե - խնամ կը ձօ - նեմ քեզ Հա-րըս-տու-թիւն 'ւԱ -



կեանքս տալ, իմ կեանքս տալ, իմ կեանքս տալ :  
րեւ որ - դի, իբ - րեւ որ - դի, իբ - րեւ որ - դի :  
մեն բա - րիք, 'ւա - մեն բա - րիք, 'ւա - մեն բա - րիք :



Խոբէն եպ. Կար-Պէյ


Ս. Գ. Կոմիտեան




1. Թէ տա-յին ին-ծի... Թագ և ա - դա-մանդ, գաւազան, Բեզ



դայն ձօ - նէ - ի, քեզ դայն ձօ - նէ - ի, Թա -



գուհ-եաց դըր-խոյ . . . Հա-յաս-տա . . . ն, Հա-յաս-տան :



Թէ տային ինծի  
Ծիրանի շողջող պատմուճան,  
Քո յուս ձգէի՝ (կրկնէ)  
Ո՛՛վ իմ թշուառ Հայաստան :

Թէ տային ինծի  
Դարուց հոյլ ի հոյլ շքրջան,  
Սիրով քեզ տայի՝ (կրկնէ)  
Իմ կեանքն ու հոգին, Հայաստան :

Թէ տային ինծի  
Սիրա ու սէր կուսի շուշան,  
Ես քեզ ընտրէի (կրկնէ)  
Սրտիս միակ սէր, Հայաստան :

Թէ տային ինծի  
Գոռ ազատութիւն անսահման,  
Ես վեր ընտրէի՝ (կրկնէ)  
Քո վեհ դերութիւն, Հայաստան :

Թէ տային ինծի  
Սիրա իմ ընտրել օթեւան,  
Զաւե՛րդ ասէի՝ (կրկնէ)  
Ինձ արքայութիւն, Հայաստան :

Թէ տային ինծի  
Հրեշտակի ջնար բոցեղեան,  
Ես քեզ կ'երգէի՝ (կրկնէ)  
Բոլոր իմ շքնշով, Հայաստան :

Ս. Հ. Ֆելդկեան

Ս. Գ. Կոմիտեան

Andante cantabile

1. Թէ իմս հայ-րեն - եաց թը - նար սը - գա -

ւոր, Հե - ծէ սըխ-րա - գին՝ իմ հո - գիս

է այն. Թէ նո - րա բեկ - բեկ Թե -

լեր վը-տա-ւոր Խօ - սի ող-րա-ձայն՝ իմ սըր-

տիկս է այն: Խօ - սի ող-րա-ձայն իմ սըր-տիկս է այն:

2. Թէ Հայ մուսային սրտառուչ նուազ Դեռ կ'եղերերգէ՝ Հառաչանքս է այն, Թէ Հայաստանի սեւ բախտին Հագազ Լայ աղէկտուր՝ Հեծեծանքս է այն:
3. Թէ Հայկ եւ Արամ, Վարդան, Վահաններ Ինկած տեսանես՝ իմ ուժս է այն, Թէ զէնք, Թէ զըրազ, Թէ սուր, Թէ սուսեր Փշրած, կոտորած՝ ոսկորներս է այն:
4. Թէ վճիտ դետերն, աղբերքն արծաթի Լալով առուակեն՝ երակներս է այն. Թէ Տիգրիս, Գեհոն, Փիսոն մոնչեն, Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է այն:
5. Ուր երբ տեսանեմ զիմ Հէզն Հայաստան Ի մէջ իր փառաց՝ իմ բաղձանքս է այն. Յայնժամ թող մեռնիմ իր ծոց մայրական, Զիմ վերջին շնչոյս՝ միակ ուխտս է այն:

Գամառ-Գարիպա  
Խճերի

Ս. Գ. Էօմբերեան

1. Փառք Աստու - ծու, Հայ ա-րիւն ալ վո-թե - ցաւ,

Եւ - ըն - պա - յի արեան պաս - քը յա - դե - ցաւ .

Եւ - ըն - պա - յի ար - եան պաս - քը յա - դե - ցաւ .

Unisio

Չու-դեր գիտ - նալ, որ աշ-խար-հի մէջ Հայ կայ,

Հա - յի մէջ ալ մարդ-կա-յին սիրա, հո - գի կայ .

Երբ Հո - տտեց Հա - յի ար - եան գո - լոր - շին,

Միտ - քը ձը - դեց թը-քած մը - ըսած Հայ ազ - գին :

Միտ - քը ձը - դեց թը-քած մը - ըսած Հայ ազ - գին :

